

Հույները Հայաստանում

Հայաստանում հույները բնակվել են դեռևս **Տիգրան Մեծի** օրոք, երբ վերջինս գաղթեցրեց նրանց **Կիլիկիայից**: Սակայն հույների մեծ ներհոսք եղավ ավելի քան 2 հարյուր տարի առաջ՝ 1760-ականներին, երբ Իրակլի թագավորի հրավերով **Օսմանյան կայսրությունից** մեծ թվով հույն հանքափորներ են տեղափոխվել և բնակություն հաստատել Հայաստանի՝ վրացական ազդեցության տակ գտնվող բնակավայրերում: Հիմնականում **հույների** ուժերով է կառուցվել նախ Ախթալայի արծաթաձուլական, իսկ 1770-ին՝ Ալավերդու, այնուհետև՝ Շամլուղի պղնձաձուլական գործարանները:

Ինչպես ողջ **Անդրկովկասի**, այնպես էլ Հայաստանի հույները խոսում են հունարենի պոնտական բարբառով, որը հնագույն հունարենի՝ իոնական հունարենի տարածությունն է:

Շատերը **Տրապիզոնից** և **Կարսի մարզից** 19-20-րդ դարերում գաղթացածներ են (ինքնանվանում՝ Ռոմեյուս): Հայաստանի բոլոր հույները վարժ խոսում են և **հայերեն** և **հունարեն**: Ներկայումս Հայաստանում բնակվում է 6.000-7.000 հույն և ևս 100-ը **ԼՂՀ**-ում:

Ներկայումս Հայաստանում կա մեկ հունական եկեղեցի՝ **Այոս Գեորգիոս** Սուրբ Գևորգ, որը գտնվում է **Հանքավանում**: Քննարկում են Երևանում, Ալավերդիում կառուցել հունական վանքեր:

Ներկայումս հունական համայնքներ կան **Ախթալայում, Ալավերդիում, Լոռու մարզում, Երևանում, Հանքավանում** և **Գյումրիում**, ինչպես

նաև **Ստեփանավան, Նոյեմբերյան** և **Վանաձոր** քաղաքներում: Ներկայումս Հայաստանի միակ հունական գյուղը **Յաղդանն** է:

Մադան (Լենհանքեր)

20 տարի առաջ ազգությամբ հույն 800 բնակիչ ունեցող Մադանն այլևս ոչ թե առանձին գյուղ է, այլ 5 կմ հեռավորության վրա գտնվող Ալավերդի քաղաքի մի թաղամասն է, ընդամենը՝ 75 բնակչով: Ընդ որում, Մադանում ապրող 40 ընտանիքներից միայն 5-ն է հունական՝ հիմնականում ծեր թոշակառուներից բաղկացած: Մադանում չկա հունական-ուղղափառ եկեղեցի: